

ՎԱՐԴԱՎԱՌ ԿԱՄ ԵՐԲ ՅԱՅՏԱԾՈՒՈՒՄ Է ՄՈՌԱՑՈՒԱԾ ԾԱՂԿԱՆՈՒՆԸ

Մուտք: «Վարդավառ» բառը, այդպէս էլ մնալով չստուգաբանուած, տեղիք է տուել տարակարծիք մեկնաբանութիւնների, որոնք ունեն «վարդ» արմատի ծագումը ներկայացնող երկու հիմնական ելակէտ՝ պահլաւերէնից փոխառած «վարդ» ծաղկանունը, որ լայն կիրառութիւն ունի հայերէնում, եւ «ջուր» իմաստով խեթերէն «վարդ» կամ սանսկրիտի «վարդ» արմատը, որ վերապահօրէն կարելի է ընդունել, թէ հայերէնում միայն «վարդավառ» բառում է առկայ: Վերապահօրէն, քանի որ, հաւանական է, հայերէնում էլի կան բառեր, որոնք ոչ միայն իմաստային, այլեւ հնչիւնական մակարդակում յիշեցնում են ջուր նշանակող «վարդ»-ը: Թեւեւ Հր. Մարտիրոսեանը «յուրթի» բառի ստուգաբանութիւնը ներկայացնելիս գրում է, թէ պարզ չէ՝ արդեօք որեւէ կապ ունի՞ «վարդ-ա-վառ» բառի «*վառ» արմատի հետ՝, այնուամենայնիւ, կարծում եմ, որ այն աւելի շուտ կապ ունի առաջին բաղադրիչի հետ, որքան էլ վարդ-ջուր հիմնաւորումները լեզուաբանօրէն թոյլ լինեն: Գուցէ «յուրթի» բառն աւելի հին է, որի յետագայ բարբառային տարբերակները ստացել են «վարթ» ձեւը: Չէ՞ որ որոշ բարբառներում ակնյայտ իրողութիւն է [h]>[վ] անցումը, ինչպէս Ղարաբաղի բարբառում՝ հող>վրէղ, հոտ>վրէտ, յօռի>վօռի եւ այլն:

Արդեօք եղե՞լ է տօնի եւ վարդի կապը, թէ՞ դարերի հոլովոյթում «վարդ-ջուր» գաղափարի հետզհետէ մթազնման արդիւնքում է ի յայտ եկել «վարդ-ծաղիկ» հասկացութեան հետ Վարդավառի տօնի առընչութիւնը:

Աճառեանը, բառը թողնելով անստոյգ, այնուամենայնիւ ներկայացնում է բառի ստուգաբանական փորձերը՝ սկսած «արդ աւար» եւ «վարժարան» բառախաղով մեկնաբանած Մովսէս Քերթոզի Վարդավառի ճառից մինչեւ Արփիարեանի, Պարոնեանի, Լեւոնեանի ստուգաբանութիւնները՝ աւեստայի «աէթրա» (կրակ), սանսկրիտի «վարդ» (ջուր), «բարդ» (խտտի դէզ) արմատներով: Ուշադրութեան են արժանի Ա. Արփիարեանի հետաքրքիր մտորումները բառի եւ նրա ստուգաբանութեան մասին: Թեւեւ լեզուաբանութեան մէջ «ջուր» իմաստով արմատի հետ «վարդավառ» բառի կապը Գրիգոր Ղափանցեանի (1887-1957) անուան հետ է կապուում¹, սակայն «Բազմավէպ»ի 1902 թուականի համարում Հերպետ (Հրպետ) ծածկանունով Արփիար Արփիարեանը (1851-1908) «Հինէն-նորէն» ուսումնասիրութեան մէջ անդրադառնում է «վարդավառ» բառին եւ այն ստուգաբանում որպէս սանսկրիտի «վարդ» (ջուր) եւ հայերէն «վառ» (սրսկում)

¹ Martirosyan Hr., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; Nr. 8), 2010., p. 498:

² Капанцян Г., Хеттские боги у армян, Երեւանի պետական համալսարանի գիտական աշխատութիւններ, հատոր 14, Երեւան, 1940, 279-280:

արմատներից առաջացած բառ³: Այդ ժամանակ Գր. Ղափանցեանը դեռ 15-ամեայ պատանի էր:

Ըստ Հր. Մարտիրոսեանի՝ «ջուր» իմաստով ստուգաբանությունը լիարժեքորեն չի հիմնավորվում. «Իմաստային առումով այս մեկնությունը լրիվ հասկանալի է ու թափանցիկ: ... Սակայն ձեռի առումով այս ստուգաբանությունը խիստ խախտու է, քանի որ լուրջ դժուարություններ կան»⁴:

Վարդավառի տօնի եւ բառի եկեղեցական ու գիտական բացատրությունները առաւելապէս զուգորդուում են վարդի ու նրա ծաղկման հետ՝ Ալիշանից⁵ մինչեւ Ռասել, որ բառը բացատրում է որպէս «վարդ բերող, պարզեւող»⁶ եւ Հր. Մարտիրոսեան. « Մէս ստուգաբանութեան համաձայն առաջին բաղադրիչը վարդ ծաղկանունն է, ինչը հայերէնի հողի վրայ թափանցիկ է ու երեւի հէնց ճիշտ է (տիպաբանօրէն հմմտ. Rosalia տօնը՝ rosa «վարդ» բառից. հմմտ. նաեւ վրաց. vardoba, vardis phenoba)»⁷:

Փոքրիկ ճշգրտում պէտք է կատարել. տօնը միշտ նշուել է Նաւասարդի 1-ին (551-ից՝ յուլիսի 28-ից օգոստոսի 1-ը), եւ այս հանգամանքն ինքնին բացառում է վարդի ծաղկման հետ տօնի կապը. վարդը ծաղկում է մայիսի սկզբներին՝ վարդավառից շուրջ երեք ամիս առաջ: Մինչդեռ առհասարակ տօներն իրենց անուններով, բովանդակութեամբ եւ ծէսերով անմիջականօրէն առնչուում են բնութեան շնչառութեան որոշակի պահերի հետ, ինչպէս, օրինակ, խաղողօրհները՝ խաղողի հասունացման, ծաղկազարդը՝ ծառերի ծաղկման շրջանի հետ եւ այլն: Եւ բնական է, որ ինչպէս մինչեւ Խաղողօրհներ չէին ճաշակում քաղցրանալ սկսած խաղողը, այդպէս էլ մինչեւ Վարդավառ խնձորի պահք էր, եւ միայն այդ տօնի ծէսերով օրհնուած պտուղն էր թոյլատրուում ճաշակել: Բսկ խնձորն սկսում է հասունանալ յուլիսի սկզբներին:

Գրութեան գուգաձեւությունները նկատի առնելով՝ Վ. Դերիկեանը համարում է, որ «իմաստաբառակազմական առումով այն մթագնուած է եղել, երբ հին հեթանոսական տօնից փոխանցուել է հինգերորդ դարի մեր գրաւոր մատենագրութեանը: Այնպէս որ, այս բառի զուտ լեզուաբանական քննությունն աւելի շատ յենուելու է արտաքին պատահական նմանությունների եւ հնչյունական ընդհանրությունների վրայ»⁸: Աւելացնում է, որ տօնի ժողովրդական արարողությունը եւս բաւարար չէ, որովհետեւ տօնի բնոյթից ելնելով՝

³ Արփիարեան Ա. (Հերպետ), Հինէն-նորէն, Բագմավէպ, Վենետիկ, 1902, էջ 290-291:

⁴ Մարտիրոսեան Հրաչ,

<https://www.facebook.com/groups/230828630314947/permalink/501990473198760/>, 02.04.2013:

⁵ Ղեւոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 364-365,

⁶ Russell J., The etymology of Armenian vardavar, Annual of Armenian linguistics, vol. 13, 1992, p. 64-66.

⁷ Մարտիրոսեան Հր.,

<https://www.facebook.com/groups/230828630314947/permalink/501990473198760/>, 02.04.2013:

⁸ Դերիկեան Վ., Պայծառակերպությունը եւ Վարդավառի տօնը, Երեւան, 2006, էջ 70:

առաջնությունը պետք է տալ ջրին: Դե, իսկ յենունելով հայ եկեղեցական մատենագրութեան մէջ եղած բացատրութիւններից, հասկանալի է, որ բառը պետք է բխեցուէր «վարդ» ծաղկանունից:

Մի շարք կարեւոր յենման կէտեր առանձնացնելով գրականութեան, բառաստուգաբանութեան, տիեզերածնական առասպելի խորքերում՝ կը փորձենք շարժուել հետաքրքիր մակածութիւնների ուղով՝ յանգելով բառի նոր ընկալման: Եզրայանգումների համար բանալի է «նունուֆար» բառը, որի նոր ստուգաբանությունը՝ առասպելի ու լեզուի մթագնած կապերի վերականգնմամբ, ելակէտ է «վարդավառ» բառի ստուգաբանութեան համար:

Եգիպտական տիեզերածնական առասպելը եւ «նունուֆար» բառի ծագումը:

Նունուֆարը հարսնամատագիների ընտանիքի բոյս է, որ նոյն ջրաշուշանը կամ լոտոսն է: Տարածուած է կենտրոնական եւ հարաւային Ասիայում, յատկապէս՝ Նեղոսի, Գանգէսի ջրերում: Ծաղկում է յուլիսի կէսերից, սերմերից ստացած ալեւրն օգտագործում են սննդի մէջ, դրանք յայտնի են նաեւ իրենց բուժիչ եւ երիտասարդացնող յատկութեամբ: Նունուֆար-լոտոսը առաւելապէս առասպելաբանաստեղծական տարողունակ կերպար է, եւ լինելով հնագոյն խորհրդանշաններից մեկը՝ պարունակում է խորը իմաստասիրական եւ կրօնական նշանակութիւն՝ բարձրանալով սովորական ծաղկի գոյաձեւից: Նրա նախնական եւ հիմնական նշանակութիւնը տարբեր մշակոյթներում կանացի սկիզբը ներկայացնող արարչական ուժն է, նշանակը ինքնածին տիեզերական գոյի, արեւի ու աշխարհաստեղծ աստուածների խորհրդանշանը, պտղաբերութեան, անմահութեան, մաքրութեան, ոգեղինութեան, փառքի, ծննդի ու վերածննդի կերպաւորումը, մարդու հոգեւոր աճի մարմնաւորումը, կատարելութեան հասնելու նրա ձգտման արտայայտութիւնը: Այս ամէնով հանդերձ՝ իր խորհրդաւորութեամբ շողում է նաեւ բառը, որի ստուգաբանութիւնն անմիջականօրէն կապուած է «վարդավառ» բառի ստուգաբանութեան հետ: Եթէ իմ բացատրութիւնները թիւր լինեն կամ թերի, ոչինչ չի պակասելու եղած գիտական նիւթից, մինչդեռ ճիշդ ու հիմնաւոր լինելու դէպքում դրանք առնուազն մեկ բառի յայտնութեամբ կը լրացնեն լեզուաճանաչողութիւնը, եւ այդ բառը կը դառնայ լեզուիմաստասիրութեան հետաքրքիր նշաններից:

Նախ օգնութեան է գալիս արմատական բառարանը:

«Նունուֆար» բառը (նոնֆար, նոնոֆար, նոնոֆար, նունաֆար, նինոֆար, նիլուֆար, լիլուֆար եւ այլն), որ լատիներէն *nymphaea*-ն է, ըստ ստուգաբանական բառարանների, փոխառութիւն է արաբերէնից: Ըստ նոյն լեզուաբանական աղբիւրների՝ արաբա-պարսկական *nilufar*, *nufar* եւ այլ ձեւերից է փոխառուած թուրքերէն, յունարէն, ասորերէն, ռումիներէն, ռուսերէն, ֆրանսերէն, իսպաներէն, իտալերէն համանիշ եւ համահունչ բառը, եւ բոլորի

հիմքը հնդեւրոպական է, սանսկրիտի nilotpala բառը: Հրաչեայ Աճառեանի Արմատական բառարանը բերում է nilotpala բառի ծագման տարբերակներ, որոնցից մեկը բառը բացատրում է nila (կապոյտ) եւ utpala (նունուֆար) արմատներով⁹: Ընդունելով հանդերձ բոլոր հնարաւոր տարբերակները՝ կարծում եմ, առնուազն տարօրինակ է որեւէ բառի համար արմատ ընդունել այնպիսի մի բառ, որի կազմում առկայ է խնդրոյ առարկայ բառը: Մտածում եմ, որ այս բառի համար կայ աւելի հաւաստի ու գեղեցիկ մի յիշատակարան՝ Հին Եգիպտոսի տիեզերածնական առասպելը, որտեղ պահուած է նաեւ նունուֆարի ծննդեան վկայականը:

Եգիպտական աշխարհաստեղծման առասպելներում աշխարհը համատարած նախաստեղծ ջրերի քառս էր, նախաջրերի ովկիանոս, որից դուրս եկան բոլոր աստուածները եւ ստեղծեցին երկիրը, երկինքը, մարդկանց, կենդանիներն ու բոյսերը: Նախաջրերի ովկիանոսը, որ «ինքն իրեն ստեղծողն» է, ինքն իր մէջ գոյողը, այլագոյութեան անհունը եւ հայրը բոլոր աստուածների, կոչուում է Նուն¹⁰: Սա գլխաւոր յուշումն է, որ եգիպտոսէն մտապատկերում է նունուֆարն իր արմատով ու դառնում գունեղ մի վրձնահարուած նախաջրերի մակերէւոյթին... Այո, կարծում եմ, որ «նունուֆար» բառը, ինչպէս եւ նունուֆար ծաղիկը, ծագում է եգիպտական Նուն նախաջրից, եւ ասածս անհիմն չէ, այդպէս են աւանդել տիեզերքի ծննդեան մասին եգիպտական առասպելները: Դրանց համաձայն, առաջինը, որ դուրս եկաւ նախովկիանոսի քառսից, լոտոսն էր: Համատարած նախաջրերի խորքից նա դուրս բերեց առաջին աստծուն՝ Արեւ Ռային, քառսային Նունի անդրանիկ որդուն, որ նոյն Աթումն է՝ ջրածին առաջին աստուածը, լոումն ու ամբողջականութիւնը աշխարհի, որն ընդգրկում է ամէն ինչ՝ միաժամանակ լինելով դատարկութեան խորհրդանիշը: Այսպիսիով, լոտոսը, առած արեւը, պարզուեց ջրերի վրայ... Լոտոս-ջրաշուշանը հէնց նունուֆարն է, որն ուրիշ որտեղի՞ց, եթէ ոչ Նունից պիտի բարձրանար:

«Ջրաշուշան» բառը թերեւս բոլոր հին ու նոր լեզուներում «ջուր» նշանակող արմատից է կազմուած՝ լատ. aqua lilium, անգլ. waterlily, ռուս. водяная лилия, իսպ. lirio de agua, լիտուերէն vandens lelija, լատիշերէն ūdensroze եւ այլն: Նոյն տրամաբանութեամբ եւ բառաստեղծական կաղապարով է կազմուած «նունուֆար» բառը: Մի էական տարբերութեամբ, որ եթէ «ջրաշուշան» բառը ջրի հետ գուգորդուում է անմիջականօրէն՝ զգայարաններին փոխանցելով ջրի նիւթականութեան ազդակներ, ապա «նունուֆարը» միտքն ուղղում է դէպի յաւերժական նախանիւթ, սուրբստանգը, նախաստեղծ ջուրը: Ջրաշուշանը շքեղ

⁹ **Աճառեան Հր.**, Արմատական բառարան, հատոր Գ, Երեւան, 1930, 472; Böhtlingk, 1, 899; Böhtlingk, 4, 295; Hübschmann, 1895, 279:

¹⁰ Мифы народов мира, электронное издание, Москва, 2008, с. 350, 734; Мифологический словарь, 1991, 222:

ծաղիկ է ջրերի վրայ, նունուֆարը խորհրդաւոր ծաղկումն է գոյի, որ Նունի վրայ է լողում՝ պարզելով առասպելի նախաստեղծ հմայքը...

Ըստ եգիպտացիների, ինչպէս աշխարհի ծագման, այնպէս էլ աշխարհի կործանման պատճառը նախաստեղծ ջուրն է, նա է միակ նախագոյն ու վերջնագոյը: Աշխարհի ստեղծումը քառսից դառնալի է. աշխարհի գոյութիւնը դիմադրութիւնն է քառսին, բայց աշխարհը կարող է վերստին քառսի վերածուել: «Մեռեալների գրքում» աստուածների պահուածքից դժգոհ Աթումը սպառնում է. «Ես կը կործանեմ ամէնը, ինչ ես ստեղծել եմ: Աշխարհը նորից կը վերածուի Քառսի (Նուն) եւ անվերջութեան (Խուղ), ինչպէս սկզբում էր»¹¹: Եւ փոքր-ինչ ծիրից շեղուելով, գուտ բնագանգօրէն. հարց է առաջանում, պատահականութիւնն է, արդեօք, որ ջրհեղեղ է նշանակում անգլերէն iNUNdation բառը, որի արմատը, որքան էլ համեմատական լեզուաբանութեան ստուգաբանութեամբ՝ լատիներէն unda (ալիք) բառը լինի, միեւնոյն է, կործանարար տարերքի անունն է եւ Նունի մասին յիշեցնում է ոչ միայն որպէս նախագոյ քառսի հասկացային արտացոլանք՝ բառ, այլեւ որպէս Նունի անուանապատկերով ընդելլուզուած էջանշան: Եւ յարաստուգաբանօրէն, թերեւս մերձստուգաբանօրէն կարծում եմ՝ պատահական չէ, որ ջրհեղեղի աստուածաշնչեան պատմութեան առանցքային կերպարը Նոյն է՝ գուցէ եւ քառսային նախաջրերի աստծոյ անուանակիցը՝ հնչիւնատառադարձումներով վկայուած:

Բնական է, որ Եգիպտոսում ամէն ինչ կապուում էր Նեղոսի վարարման հետ, որ է՛ւ կեանք էր բերում, ե՛ւ ոչնչացնում կենդանի ամէն ինչ¹²: Համարուում է, որ Նեղոս անունը յունարէնի (Νεῖλος) կամ լատիներէնի (Nilus) միջոցով է անցել: Իսկ նախնական անունը կազմուել է սեմական nahal արմատից, որ նշանակում է «հովիտ» կամ «գետահովիտ», լայն իմաստով՝ «գետ»¹³: Մինչդեռ կայ եւ վարկած, որ Նեղոս անունը ծագում է լիբիական ցեղերի լեզուներում «ջուր» նշանակող nil արմատից, որն էլ յետոյ կերպափախուել է nil-ի: Ահա՝ որտեղ կարող էր թաղուած լինել «լիլուֆար» բառի արմատներից մէկը, կամ առհասարակ «lily» ծաղկի արմատը: Այս վարկածը ստուգելու եւ ճշգրտելու կարիք ունի: Սակայն այն հանգամանքը, որ Նունը նոյնացուել է Նեղոսի հետ, ճիշտ այնպէս, ինչպէս նունուֆարը՝ լիլուֆարի, խօսում է այդ վարկածի օգտին: Մանաւանդ որ ինչպէս բոլոր լեզուների ջրաշուշան ծաղկի անուան մէջ, այս բառերում եւս առաջին բաղադրիչը «ջուր»-ն է՝ «լիլ» կամ «նուն»:

¹¹ Мифы народов мира, электронное издание, Москва, 2, 1980, 581.

¹² Ինչպէս տիեզերաստեղծման, այնպէս էլ տաճարաշինութեան մէջ եգիպտացիները կարելոր դեր են յատկացրել ջրին: Այն ընկած է նաեւ բուրգերի կառուցման հիմքում, քանի որ եգիպտացիները ջրի միջոցով կարողացել են ստանալ ճշգրիտ հորիզոնական հարթութիւններ՝ այն օգտագործելով որպէս հարթաչափ:

¹³ Словарь современных географических названий, электронное издание, М. 2006.

Վերադառնանք «Նունուֆար»-ին, որի առաջին մասը նախաջրերից յայտաձեւուց յետոյ մնում է շողացնել շքեղ ծաղիկը իր ողջ պերճանքով:

Բառի «ֆար» մասը մի քանի նշանակութիւն կարող է ունենալ՝ սկսած «արեւ»ից ու «կրակ»ից մինչեւ «վեր», «բարձր», «շուք» ու «փառք», մինչեւ «ունենալ», «կրել», «փարել»: Փորձենք համեմատել մի շարք լեզուների արմատներ՝ իրենց նշանակութիւններով:

հայերէն - վառ-կրակ

սանսկրիտ - varnu-արեւ

պարսկերէն - farnah-արեւ

շումերերէն - bar-արեգակ, փայլել

շումերերէն - ur-տաքութիւն, կրակ

*լատիներէն - aurum-ոսկի (նախահնդեւրոպական *aus- «փայլել, շողալ»)*

անգլերէն - warm-ջերմ, տաք

անգլերէն - fire-կրակ

ռուսերէն - вар(ить)-եփել, ջերմութեամբ պատրաստել

«Նունուֆար» բառն այսպիսով մտապատկերուում է որպէս Նուն նախաջրերի ճրագ, Նունից ծնուած կրակ, Նունի բոց, Նունի արեւ, եւ անմիջականօրէն արտացոլում է նաեւ ջրի ու հրի տիեզերական կապը հնագոյն պատկերացումներում:

Հնդեւրոպական մի շարք լեզուներում գտնում ենք «գեր», «վեր», «դուրս» իմաստներով միեւնոյն ծագման հետեւեալ բառերը.

հայերէն - վեր-վրայ

սանսկրիտ - upari

պարսկերէն - upariy, bar

աւեստերէն - upairi

լատիներէն - super

յունարէն - hyper

անգլերէն - over

գերմաներէն - ubar

գոթերէն - ufarō

իռլանդերէն - for

Եւ այս իմաստները նոյնպէս նկարագրում են նունուֆար ծաղիկը՝ որպէս Նունից վեր, Նուն ովկիանոսի՝ նախաջրերի վրայ պարգուած, «Ի վեր ի վերայ վարսից...»: «Ֆար» արմատի մէկ այլ նշանակութիւն են յայտաձուլ տարբեր լեզուներ, որոնցում այդ արմատն ունի կրելու իմաստը՝

լատիներէն - fero

հունարէն - for, por

ռումիներէն - fer

հայերէն - վառ, փառ (այս իմաստով հայերէնում մի շարք բառեր կան, որոնցից են՝ զինավառ, հուսավառ, խաչվառ... փարել): Կրելու իմաստը կայ «**փարոն**», «**Լիւցիֆեր**», «**լուսաֆոր**», «**ֆոսֆոր**» եւ այլ բառերում:

Եւ այս իմաստով նունութարը՝ Նուն նախաջրերի կրած ծաղիկն է, Նուն նախովկիանոսին փարածը, ջրավառը, նունավառը («խաչվառ» բառի հայելային համաբանութեամբ)...

Կան եւ այս արմատի «ճառագում», «փառք», «շուք» իմաստները.

հայերէն - փառ-ք (շուք, վեհութիւն)

պահլաւերէն - farr (փառք, շուք)

նոր պարսկերէն - farr (փառաւորութիւն, պերճութիւն),

նոր պարսկերէն - farra (պերճութիւն, զարդ)

Այսպիսով՝ նունութարը՝ նախաջրերի շուքն է, փառքը, Նունի ճառագումը, Նունի զարդը:

Թե՛՛ նոյն, թե՛՛ տարբեր ծագում ունենալու դէպքում բոլոր այս իմաստները պատշաճում են նունութար անունը կրող ծաղիկին եւ միաժամանակ հրաշալի համադրուում Նունի հետ:

**Նունութարը հայկական մշակոյթում եւ նրա շքեղ հոմանիշը հայերէնում:
Նարեկացու հանելուկները:**

Արդեօ՞ք բնորոշ է հայկական մշակոյթին նունութար-լոտոսը: Անշուշտ, այն կայ միջնադարեան քնարերգութեան մէջ՝ որպէս գեղեցիկ «ծաղկափնջերում» հանդիպող մի ծաղիկ, ինչպիսին է Կոստանդին Երզնկացու «Տաղ գարնան ազնիւ է» տաղում.

Չինարըն ու **նունութարըն**,

Նարգիզ ծաղիկըն խայտագոյն,

Մուրտըն, շուշան ու բրաբիոն,

Եւ ըռահանն խիստ սիրուն¹⁴:

Քուչակի հայրենում՝

Մանտրիկ քայլափոխ կաներ,

Կու քաղէր ծաղիկ **նունութար**¹⁵...

Բժշկագիտական երկերում, օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացու «վարդ» բառայօդուածում՝ «եւ իր փոխանն **նունութարն** է»¹⁶, կամ Ալեքսիանոսի

¹⁴ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երեւան, 1962, էջ 136:

¹⁵ Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Երեւան, 1957, էջ 184:

¹⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, 546:

բժշկարանում՝ «Եւ ա՛ն Բ մթխալ **նունուֆար**»¹⁷ (մթխալ՝ չափման միաւոր - ծան. Լ. Աւ.): Իշօխի իմաստասիրական եւ գիտական մտածութիւններում. «Եւ բնութիւնն տայ զհովութիւն... ջրի շուշանի, որ է **նունուֆար**»¹⁸: Որոշ տուեալներով՝ Վանի թագաւորութեան շրջանում նաւախելերը զարդարում էին նունուֆարով, իսկ աւելի ուշ շրջանում այն դարձել է կիլիկեան նաւատորմի խորհրդանշանը¹⁹:

Սակայն հայ մշակոյթում հանդիպում է նաեւ նունուֆարի բնագանգական կերպարը: Թերեւս մի երկու օրինակով կարելի է համոզուել, որ թեւեւ նունուֆարը միջնադարեան հայ քնարերգութեան մէջ վարդի նման լայն տարածում եւ կիրառութիւն չունի, բայց եւ անմիջականօրէն առնչուում է դիցաբանական հնագոյն ակունքներին եւ յայտնուում է խորհրդաւոր պատկերներում ու տեսարաններում՝ բացուելով որպէս բազմաթերթ խորհրդանշան:

Սահակ Մովսիսեանը (Բենսէ) գրառել է մի անանդագրոյց, որ գտնում ենք նաեւ Արամ Ղանալանեանի «Աւանդապատում» գրքում. «Սասունցի Դաւիթը Մեղրագետում լողանալիս նետահար է լինում դարանակալ թշնամուց (Չմշկիկ Սուլթանից - ծան. Լ. Աւ.): Դաւթի թափած արեան կաթիլներից բուսնում է **Նունուֆար** ծաղիկը»²⁰: Սա կարծես Սասնայ տոհմի ծագումնաբանութեան գեղեցիկ յիշեցումն է միաժամանակ, արեան մէջ արմատացած ջրային տարերքի առասպելական ծաղկումը, նաեւ Շամիրամից զարկուող-մեռնող Արայի բնաստուածային յարութեան չքնաղ կերպաւորումը եւ, անկասկած, անմահութեան հնագոյն խորհրդանշանը:

17-րդ դարի տաղերգու Դաւիթ Սալաձորցին, «Գովասանք ծաղկանց» տաղում բազմաթիւ ծաղիկների մասին պարզ ու անմիջական հագներգութեան մէջ յանկարծ զարմանալի հնամենի պատկեր է վերստեղծում՝ յիշեցնելով 19-րդ դարի կէսերին յայտնաբերուած Գիլգամէշի առասպելի յայտնի դրամատիկ դրուագը՝ անմահութեան ծաղկի որոնումներում.

Այն **նունուֆար** ծաղիկն որ կայ, բուսնի յեզերս ջրերուն,

Օձերն զինքն կու պահեն, մարդ չի քաղել նոցա ահուն²¹:

Ահա նաեւ մեկ-երկու անդրադարձ հայկական մշակոյթում երեւացող նունուֆարի պատկերներին: Բրիւսովը ճարտարապետութեան մէջ յայտնուած լոտոսի մասին 1917-ին գրում է, որ Վանի մօտակայքում՝ Թոփրակ-կալի բարձրութիւններում, հաւաքուել են ինչ-որ անյայտ տաճարի կամ պալատի եզրագարդի բեկորներ: «Այդ բեկորների վրայ, որոնք կարմիր մարմարից են,

¹⁷ **Ղազարեան Ռ., Աւետիսեան Հ.**, Միջին հայերէնի բառարան, Երեւան, 2006, էջ 578:

¹⁸ **Իշօխ**, Գիրք ի վերայ բնութեան, Երեւան, 1979, էջ 89:

¹⁹ **Мхитарян Н.**, Нуруфар и брабион, цветы богоматери, www.armmuseum.ru/news-blog/2017/8/27/--3, 27.08.2017.

²⁰ **Ղանալանեան Ա.**, Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 113:

²¹ Ուշմիջնադարեան հայ բանաստեղծութիւն, հատոր Բ, 1987, էջ 357:

քանդակուած են նաեւ եզներ, խաղողի ողկոյգներ ու տերեւներ, ծառեր, արմաւենիկներ եւ վերջապէս *լոտոսի ծաղիկներ* (ընդգծումը՝ Վ. Բ.): Լոտոսը, որ Եգիպտոսի բնութեան արտադրութիւնն է եւ եգիպտական արուեստի սովորական ծաղիկ, կովկասցի արուեստագէտի ստեղծագործութեան մէջ կարող էր երեւան գալ միմիայն իբր հետեւանք օտարերկրեայ արուեստի ընդօրինակման: Ջանազան տուեալների հիման վրայ այդ ծոփորը (կամ խարիսխը) թուագրուում է 7-րդ դարին Ք. ծ. ա.»²²:

Հայկական մանրանկարչութեանը բնորոշ թեմաների մասին խօսելով՝ Վիգէն Ղազարեանը նկատում է. «10-րդ դարի սկզբի Մլքէի Աւետարանում պահպանուած մանրանկարների խորաններում կան եգիպտական մոտիւներ... Եգիպտական մոտիւներ են լոտոսը, նավակները, ձուկ բռնող կամ մարդու հոգին Աստծոյ համար որսացող մարդիկ եւ այլն, եւ այս մոտիւները կարող էին շատ հին ծագում ունենալ եւ ինչ-որ ճանապարհով ներթափանցել Հայաստան»²³:

Ամէն դէպքում, այս մտայնագումներից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրողները լոտոս-նունուֆարի կերպարը հայկական մշակոյթում Եգիպտոսից ներմուծուած են համարում, օտարածին ու ոչ բնաշխարհիկ: Իսկ գուցէ այդ կերպար-խորհրդանշանը, ծնուած լինելով Եգիպտոսում՝ Նեղոսի ափերին, համօրէն սիրելի տօնահանդէսներում ծիսական-պաշտամունքային՝ ծաղկի իր առանցքայնութեամբ պարագրել է ընդգրկուն մի աշխարհագրութիւն՝ ողողելով ամբողջ Արեւելքը:

Անդրադառնանք Վարդավառի տօնին, որը, ինչպէս նունուֆարը, արմատներով հասնում է մինչեւ Եգիպտոս: Այդ են հաստատում Մովսէս Սիւնեցին եւ Յովհաննէս Երզնկացին՝ Վարդավառը բացատրելով «աւար» բառով՝ «այն յարաբերելով հրէաների՝ Եգիպտական գերութիւնից ելնելուց մինչեւ Տաղաւարահարաց տօնն ընկած ժամանակաշրջանի հետ: Երզնկացին գրում է. «Մովսէս յելսն յԵգիպտոսէ հրամանաւն Աստուծոյ պատուիրեաց որդոցն Իսրայէլի՝ առ աւար կողոպտեա գեգիպտացիսն»: Երզնկացին այնուհետեւ դարձեալ շեշտում է, որ այս տօնը կատարում էին եգիպտացիները՝ փարաւոնի գլխաւորութեամբ «սփռելով զծաղիկս վարդիցն ի վրանս մեծամեծացն: Արդ զնոյն օրինակ հրամայէր Աստուած առնել Որդոցն Իսրայէլի»²⁴: Ըստ Երզնկացու, Մովսէս մարգարէն Տաղաւարահարաց տօնը հաստատեց՝ Եգիպտոսում կատարուող տօնի փոխարէն՝ «զվաղնջուց սովորութիւն ոչ կարացեալ խափանել, ապա հարկաւորել զարտաքին ներքին կարգելով», ինչպէս մեր հայրերը,

²² **Բրիստով Վ.**, «Մֆինքսներ եւ վիշապներ», (մի քանի գծեր հնագոյն Կովկասի քաղաքակրթութիւնից), Գործ, Բաքու, 1917, համար 5-6, էջ 124:

²³ **Ղազարեան Վ.**, Հայկական մանրանկարչութեան մասին, Յասմիկ Հմայակեան, Զրոյցներ հայ մշակոյթի մասին, հարցազրոյցների ժողովածու, Երեւան, 2008, էջ 64-65:

²⁴ **Ղեւրիկեան Վ.**, Պայծառակերպութիւնը եւ Վարդավառի տօնը, Երեւան, 2006, 73-74: Մէջբերումները՝ Երեւանի Մատենադարան, ձեռագիր 2173, 17ա, 19ա:

չկարողանալով արմատախիլ անել հեթանոսական տօնը, արտաքին ձեռք մեջ նոր բովանդակություն դրեցին:

Թեև մեր մատենագիրները հրեաների՝ Եգիպտոսից դուրս գալու հետ են կապում տօնի փոխանցումը, լեզուաբան արեւելագետ Ֆրանցիսկոս Մենինսկին (1623-1698) հաղորդում է, որ Վարդավառը համընդհանուր տօն է եղել՝ ընդգրկելով լայն աշխարհագրություն. այն հայերից բացի նշել են նաեւ պարսիկները, քաղդեացիները, յոյները²⁵: Այո, պարսկական Աբրիզեզան տօնը, ջրցանութեամբ ուղեկցուելով, զուգահեռում է հայկական Վարդավառի տօնին, թեւ դրանք նշում են մօտաւորապէս հինգ ամսուայ տարբերութեամբ. Աբրիզեզան տօնում են գարնան առաջին օրը: Գուցէ իսկապէս տօնն իր բնոյթով համընկնում է Վարդավառին, բայց եւ ժամանակային տարբերութիւնը առիթ է տալիս նաեւ այլ դիտակէտից մօտենալ խնդրին: Ըստ որոշ աղբերների՝ պարսիկներն ունեին Նունուֆարի տօն, եւ ինձ թուում է, որ այն համապատասխանում է Վարդավառի տօնին, նաեւ օրացուցային որոշարկմամբ: Պարսիկ հանրագիտակ Աբու Ռահան Բիրունին (973-1048) արձանագրել է, որ պարսիկները Տիր ամսուայ վեցերորդ օրը (համընկնում է յունիսի 27-28-ին), նշում են մի տօն, որ կոչում են «ջէշնի-ի-նիլուֆար»²⁶: Որոշ փաստեր յուշում են, որ Վարդավառն իր առանցքային կերպարով հենց Նունուֆարի տօն է:

Հաւանական է, որ տօների հետ անմիջականօրէն առնչուող ծաղիկները, գործածութիւնից դուրս մղելով սեփական անուանումները, ժողովրդի շրջանում ընդունեն հենց տօնի անունը, ինչպէս Ինճիճեանի տեղեկութիւնն է վկայում: «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» աշխատութեան մէջ, ներկայացնելով Տրապիզոնը, գրում է. «... Ի վերայ լեռանց ունի զանազան խոտս եւ ծաղիկս օգտակարս, ի մէջ այլոց վարդերորի կամ որպէս գիւղականք անուանեն վաշտերորի ծաղիկ ինքնաբոյս, յոր անուն կոչեն զհիւսնի եուսուֆ, սակս բուսանելոյ ի ժամանակս վարդավառի»²⁷: Նաեւ Շամշադինի խօսուածքում է հանդիպում «վրթիվերի ծաղիկ» արտայայտութիւնը²⁸: «Տաւուշում տօնի նախորդ օրն աղջիկներն ամբողջ ցերեկը շրջում էին դաշտերում, բազմագոյն եւ յատկապէս «վրթիվերի» կոչուող դեղնագոյն ծաղիկը հաւաքում»²⁹: Ստ. Մալխասեանի բառարանում «Վարդավառ» բառայօդուածում որպէս երրորդ իմաստ հարցական նշանով նշուած է «Անորոշ տեսակի ծաղիկ(?)»³⁰:

²⁵ Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, Բ, Վենետիկ, 1837, էջ 792:

²⁶ **Абурайхон Бируний**, Слово о празднествах и знаменательных днях в месяцах персов, Избранные произведения, Ташкент, 1957, 231.

²⁷ **Ինճիճեան Դ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատոր Ա, 1806, Վենետիկ, էջ 282:

²⁸ **Մեսրոպեան Հ.**, Կրօնակէղեցական բառապաշարը հայերէնի բարբառներում, Երեւան, 2016, էջ 217:

²⁹ **Խառատեան-Առաքելեան Հր.**, Հայ ժողովրդական տօները (երկրորդ լրամշակուած հրատարակութիւն), Երեւան, 2005, էջ 203:

³⁰ **Մալխասեան Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատոր Դ, Երեւան, 1945, էջ 310:

Իսկ հնարաւոր է, որ հակառակը տեղի ունենար՝ տօնը նշանաւորուէր ընծայաբերուող ինչ-որ ծաղկի անուամբ, եւ հազարամեակների մշուշում պարզապէս մթագներ ծաղկի ու տօնի անունների ծագումնաբանութեան պատճառահետեւանքային կապը: Ծաղկանունից տօնի անուան ծագման ենթադրութեանը թերեւս մօտենում է Վարդավառը որպէս վարդի տօն մեկնաբանութիւնը: Սակայն համոզուած եմ, որ ուրիշ մի ծաղկի է նուիրուած Վարդավառի տօնը:

Իմ եզրայանգումների համար Նարեկացու տաղը ծառայում է որպէս «վարդավառ» բառի ստուգաբանութեան գեղարուեստական չուկէտ (մեկնակէտ): Տաղի առաջին իսկ տողում ոչ միայն կայ «վարդավառ» բառի ստուգաբանութեան ակնարկ, ինչպէս նկատել է Ստեփան Մալխասեանը (թեւեւ նրա նկատած ակնարկի (վարդ) տրամագծօրէն հակառակ ակնարկ (ջուր) նկատելն առաւել հիմնաւոր կը լինէր), այլեւ ստուգաբանութեանը օգնող յուշում, Նարեկացու այս **տաղն ինքնին գեղարուեստական բառաստուգաբանութեան փայլուն նմուշ է:**

Ակնյայտօրէն ուրիշ ծաղկի մասին է պատմում առաջին քառատողը, որ ձեւակերպուած է գեղեցիկ հանելուկի տեսքով: Ի դէպ, սա այս տաղի առաջարկած միակ հանելուկը չէ եւ ժանրի գեղարուեստական իրականացման ինչպիսի կատարելութեամբ.

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
ծավալէր ծաղիկ ծովային:

Արեւի ճառագայթների հպումից ծաղկում է ծովային ծաղիկը, որի անունը՝ Նարեկացին չի յիշատակում, աւելին՝ «վարդ» բառով շեղում է ուշադրութիւնը՝ ասես քառատողի վերջում ակնկալելով կռահումը, թե ինչ անուամբ ծաղկի մասին է պատմում:

Հանելուկի ժանրային նկարագրութիւնը լիովին համապատասխանում է քառատողի բնոյթին. «Հանելուկի պատկեր-բանաձեւը ձեւաւորուում է իրականութեան այնպիսի գծերից ու երեւոյթներից, որոնց ընդհանուր կերպարը յաճախ հեռու է հանելուկի լուծման առարկայի իրական պատկերացումը լինելուց, այլ միայն հեռուից հեռու ակնարկում է տուեալ առարկայի յատկանիշները: Նման դէպքերում հանելուկի լուծման առարկայի եւ նրա պատկեր-բանաձեւի միջեւ զգալի խզում է առաջանում, որով դժուարանում է հանելուկի լուծումը կամ գուշակումը: Եւ այդ հանգամանքն էլ կազմում է հանելուկի բուն էութիւնը, քանզի նրա նպատակն է իրական առարկաները կամ երեւոյթները քողարկել, դիմակաւորել այնպիսի պատկերներով, որոնք ենթակա լինեն դժուար գուշակման»³¹: Մեկ այլ հարց է, թե արդեօք տեղի՞ն է հանելուկն

³¹ **Յարութիւնեան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, 7:

այդ տաղում, այն էլ՝ մեկից անելի: Ի՞նչ նպատակով պետք է Նարեկացին տաղը սքողեր հանելուկներով եւ ինչպիսի՞ հանգամանքներ էին ծնում հանելուկի անհրաժեշտությունը: Սարգիս Յարութիւնեանն իր խօսքի շարունակութեան մէջ ընդհանուր կերպով ներկայացնում է հանելուկի նշանակությունը ծիսակրօնական համատեքստում. «Հանելուկի գործնական կիրառման նախնական ձեւերից մեկը, ըստ հնագոյն յիշատակարանների ու վկայությունների, կրել է առաւել կախարդական-ծիսային բնոյթ եւ գործարկուել կրօնական արարողությունների եւ պաշտամունքային տարբեր ծիսակատարությունների ժամանակ: Դեռեւս հին հնդիկների կրօնածիսային արարողություններում արարողապետների միջեւ հարց ու պատասխանի ձեւով ծաւալուում էին կրօնադիցաբանական բնոյթի հանելուկային մութ սիմուլային ասացուածքներով երկխօսություններ»³²: Եւ քանի որ հայկական ժողովրդական տօների եւ ծէսերի մէջ իրենց առանձնայատուկ տեղն ունեն խաղերը, գուշակությունները, հանելուկները, ուստի պատահական չէ՝ Նարեկացու մտայնացումը՝ համադրել տաղի մէջ բնութեան շքեղ տեսարաններն ու իրենց գեղարուեստական յղացման մէջ անգերազանցելի հանելուկներ: Նա, պարզուում է, նաեւ այս ժանրի անկրկնելի վարպետն է:

Մի պահ վերանանք այն այլաբանությունից, որով մեկնաբանուում են հոգեւոր տաղերը, փորձենք վերլուծել գեղարուեստական պատկերը: Վարդ ծաղկի հետ կապի մասին տարակուսելու առիթներ է տալիս հէնց տաղը: Արտառոց պատկերները ինքնատիպ կերպով յիշեցնում են տօնի հնագոյն էությունը, նրանց մէջ թաքնուած է խորհրդանշականութեան գեղագիտությունը: Ընդունենք, որ վարդը աղամանդ է կամ գոհար, բռնկուել է արեւի ճառագայթ վարսերից եւ իր կամ արեւի վարսերի վրայ բացել-ծաւալել է ծովային ծաղիկ: Այս պատկերը, իսկապէս, արտասովոր է, թեւէ Նարեկացու մատուցած գեղեցկությունների ու լոյսի առատութեան մէջ տրամաբանությունը միշտ վայր է դնում զենքերը... Հայեացք նետելով տաղի թարգմանություններին՝ կարելի է պարզել, որ Նարեկացու տողերն իրօք տարբերակների են եւ ծնունդ են տալիս իսկապէս գեղեցիկ պատկերների, բայց դրանք որոշակիօրէն հեռանում են բնօրինակից:

Գոհար վարդն էր քող առել

արեգակի վեհ շողերից:

Վերեւ շողերի վրայ

*ծովային ծաղիկն էր ծաւալուում*³³: - Թարգմ. Արշաւիր Մխիթարեան

³² Յարութիւնեան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ 8:

³³ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Երեւան, 2013, 28:

*Գոհար վարդն էր շղարշ անել
Արփիական վեհ վարսերից.
Ծալալուում էր հուսկ վերելում վարսերից վեր
Ծաղկածիծաղ ծովն երկնային³⁴: - Թարգմ. Վազգեն Գեորգեան*

*Алмазную розу одел
Алый свет покрывалом благим,
А над тем покрывалом благим
Жемчугом нунуфар просиял³⁵. - Пер. В. Брюсов*

Յաջորդ տողերից պարզ երևում է, որ **համատարած** ծովի մեջ է այդ ծաղիկը, եւ այդ համատարած ծովից է առնում իր գոյնը: Համատարած ծովը Նունի մասին է յիշեցնում:

Նաեւ որոշակիանում է, որ մեկ ծաղկի մասին էր պատումը, առաւել յստակում է, որ ծաղկում է ծովաշուշանը՝ ջրաշուշանը: Սակայն տաղի գեղարուեստական ու հանելուկային յղացքը, իհարկէ, պէտք է մերժէր յիշատակել նրա անունը:

Այդ դէպքում ի՞նչ է «վարդ»-ը: Քրիստոսի խորհրդանշաններից մե՞կը, Աստղիկի ծաղի՞կը, տիեզերքի պատկե՞րը... Անշուշտ, թուարկածները եւ էլի ուրիշ խորհուրդներ ամփոփում է այդ ծաղիկը՝ որպէս նշան: Իսկ գուցէ այստեղ եւս այն բոլորովին էլ մեզ յայտնի «վարդ» բառը չէ, եւ **Նարեկացին տաղի մեջ հնչիւնական նոյն կազմութիւնն ու յաջորդականութիւնն ունեցող երկու տարբեր բառեր է գործածել**: Գուցէ համարձակութիւն է կամ գիտականութեան ծիրից շեղուելու յանդուգն փորձ, ենթադրել, որ **Նարեկացին հանելուկներ առաջադրող իր տաղում «վարդ» գրելով նկատի է ունեցել ջուրը, եւ տաղի թե՛ ձեւի, թե՛ բովանդակութեան տեսանկիւնից արդարացրել օտար եւ հայերէնում չգործածուող մի բառի նպատակային կիրառութիւնը**: Հայերէնում «ջուր» բառի հոմանիշ չկայ, եթե «ծով», «գետ», «աղբեր» բառերը չփորձենք մատուցել որպէս նրա հոմանիշներ: Կարելի է մտածել, որ եթե նկատի ունէր ջուրը, կարող էր պարզապէս գրել «ջուր»: Սակայն «ջուր» բառը այդ տարրի խիստ նիւթեղէն բնոյթն է յիշեցնում, այն տաղի պատկերի մեջ կառանձնանար կենցաղայնութեամբ: Մինչդեռ Նարեկացին շքեղօրէն ներկայացնում է տիեզերքի ծագման, աշխարհի նորոգութեան, հոգեւոր այլակերպութեան պատմութիւնը, որի այլաբանական հանդիսադրումն են թե՛ Քրիստոսի Պայծառակերպութիւնը, թե՛ բնութեան ու կեանքի վերնձիւղումը խորհրդանշող Աստղիկի ծնունդը, թե՛ ջրի միջոցով մարդկութեան նորոգութեան գաղափարի մեջ նշուլող համաշխարհային

³⁴ Նոյն տեղում՝ 29:

³⁵ **Брюсов В.**, К Арапату, Поэзия Армении, Омск, 2015, 53.

ջրհեղեղի ու Նոյի պատմութիւնը («Ջրհեղեղի յիշատակը կատարէին»)³⁶: Այդ պատումը պիտի կարողանար միտքը տեղափոխել մինչեւ ժամանակների սկիզբը՝ հեռացնելով այն մեզ ծանօթ աշխարհի տարրերից, միաժամանակ ապահովելով ծանօթ այդ աշխարհի գեղեցկութիւնների զգայական ներկայութիւնը: Նարեկացին այդ արուեստն ունի եւ խորհրդանշանների բազմաշերտութիւնը կարողանում է օժտել բազմաձևալուծեամբ: Ու նաեւ լաւ գիտէր մարդկային ընկալումների սահմանները, գիտէր անտարանի շաղ տրուող մարգարտի խորհուրդը. «Մի՛ տայք տկար լսելեաց զանճառելիսն», եւ լաւ գիտէր «մի՛ յայտնապէս սփռել զորս ետես հոգով լուսոյն»³⁷: Հանելուկը Նարեկացուն օգնում է նաեւ գաղտնագրել հնագոյն ակունքներից եկող գաղափարներ:

Այսպիսով, տիեզերքի ծագումը չունի նիւթական սկիզբ, տիեզերքը ծագում է նախանիւթից, որը կարող է լինել նախաջուրը, նախաջրերի ովկիանոսը, համատարած ծովը, ինչպէս վկայում է տալը: Եւ թերեւս ջրի հնագոյն լեզուական արձագանգը՝ խեթական «վարդ»-ը միայն կարող էր կերպարանել այդ նախանիւթը: Ջուր լինելով հանդերձ՝ «վարդ»ը նախանիւթի անշօշափելիութիւնն ունի, միաժամանակ՝ ծաղկի հրապոյրը: Նարեկացու մտահայեցողութիւնը կարող էր հատել տարածութիւնների ու ժամանակների սահմանները՝ հասնելով այն կետին, որտեղ ներկայ են բոլոր ժամանակները: Եւ պէտք չէ բացառել հաւանականութիւնը, որ Նարեկացու ժամանակ «վարդ» բառը նաեւ «ջուր» իմաստով կիրառութեան այլ օրինակներ ունի, որոնք դեռ պէտք է ուսումնասիրութեամբ յայտնաբերել:

Իսկ որ «վարդ»-ը Նարեկացու տաղում ջուրն է, կարող է վստահեցնել առաջին քառատողի վերլուծութիւնն ըստ այդ իմաստի: Արեւի ճառագայթները որպէս գոհար կարող էր անդրադարձնել ջուրը, եւ ցոլարձակող նախաջուրը իր՝ ալիքուող վարսերի վրայ կրում է բացուող-ծաւալուող ծաղիկը: Ենթական մեկն է՝ ջրի հոմանիշ վարդը: Այստեղ է, որ տաղի տրամաբանութեանն ու գեղագիտական իրականացմանը սանսկրիտի «վարդ» (ջուր) բառը լիովին պատշաճում է՝ իր մակերեւոյթին հանդիսադրելով արեւելեան մշակոյթների համար սրբազան այդ ծաղկի շքեղ ծաղկման պահը՝ շարժանկարի հնարքներով մշակուած ու անթերի... Տաղի յաջորդ տողերը վերստին հաւաստիացնում են, որ նոյն այս ծաղկի պատմութիւնն է շարունակուում:

Ի համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին:

Ահա վարդի մասնակցութեամբ յաջորդ տեսարանը, որը եւս յստակօրէն չի ընկալուում.

³⁶ Ղեւոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 56:

³⁷ Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ Մեկնութիւն երգոց երգոյն Սողովմունի, Վենետիկ, 1789, էջ 8:

Այդ սօս ու տօսախ ծառերդ
վարդագոյն ոստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արօսդ
զարդ առեալ վարդն շուշանին:

Ելնելով վարդը ծաղիկ ընկալելու տրամաբանութիւնից՝ հասկացուում է, թէ վարդը շուշանի համար որպէս զարդ բերեց, կրեց կամ ընտրեց նոճին ու արօսը, կամ հակառակը՝ արօսն ու նոճին վարդը որպէս զարդ բերեցին շուշանին: Այլ կերպ անհասկանալի է, թէ ինչ կապ ունեն այդ երկու տողերը: Ահա տարբերութեանը թարգմանութիւններում.

*Այդ նոճ ու բողբոջ արօսդ
վարդով են շուշան զարդարում*³⁸: - Թարգմ. Արշաւիր Մխիթարեան

*Նոճիներն ու արօսենին նորաբողբոջ
Շրշում էին հեւքով յուշիկ՝
Գգուելով վարդ ու շուշանին*³⁹: - Թարգմ. Վազգէն Գեորգեան

*Кипарисы, красуясь, кадят
Над чашами роз и лилей;
И в долине чаши лилей
Под солнцем всходящим горят*⁴⁰. - Пер. В. Брюсов

Մինչդեռ եթէ «վարդ»ն ընկալում ենք որպէս ջուր, վերստին պատկերը յայտնուում է իր պատշաճ շրջանակի մէջ, որովհետեւ ջուրն իր արտացոլող մակերեսայնութիւնով նոճու ճեղքերի եւ արօսի փնջերի հիւստածքը որպէս զարդ է վերընծայում շուշանին՝ միայն իրեն յատուկ եղանակով գեղագիտօրէն անդրադարձնելով բնութիւնը նրա շուրջ... Այստեղ իսկապէս շուշանը պատուական գոհար է դառնում՝ իրեն արժանի շրջանակի մէջ:

Ծովային ծաղիկը ստացաւ իր անուններից մեկը՝ շուշան, որ հոմանիշն է ջրաշուշանի: «Շուշան» բառը փոխառութիւն է ասորերէնից: Ղպտիերէնում «շոշէն» են անուանում լոտոսը: Բառի բուն եւ նախնական ծագումը եգիպտական է, որից փոխառել են սեմական լեզուները՝ շոշանիմ, շոշան, սուսան, սոսան եւ այլ տարբերակներով, նրանցից էլ՝ բոլոր մեւս լեզուները:

Հէնց անուանապէս չիշատակուած «վրրթիվերի» դեղնագոյն ծաղիկ նունուֆարն⁴¹ է «Վարդավառի» տաղի առանցքային կերպարը եւ տարողունակ

³⁸ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Երեւան, 2013, էջ 28:

³⁹ Նոյն տեղում՝ էջ 29:

⁴⁰ Брюсов В., К Арапату, Поэзия Армении, Омск, 2015, 54.

խորհրդանշանը, որ գեղեցիկ տաղատուփի մէջ խնամքով թաքցնում է Նարեկացին:

Իսկ «վարդավառ» բառը, ասես բառապատճենմամբ, կազմուած է բառակազմական նոյն կաղապարով, որով բոլոր լեզուներում ստեղծուել է ջրաշուշան նշանակող բառը կամ ջրի շուշան արտայայտութիւնը՝ **վարդ** (ջուր) + ա + **վառ** (բոց, կրակ կամ կրել, ինչպէս զինավառ, խաչվառ բառերում), այսինքն՝ «ջրի բոց» կամ «ջրակիր», որ է՝ ջրի կրած ծաղիկ: Ճիշտ ինչպէս **«նունուֆար»** բառում: Եւ գուցէ հէնց այդ վարդավառ ծաղիկն է յուլիսի կէսերից կանչել մարդկանց դէպի գետերի ու լճերի ափերը՝ տօնելու իր ծաղկումը, որ խորհուրդն է հոգեւոր նորոգութեան ու մաքրութեան:

Այն, որ Նարեկացու տաղում ամենագործուն կերպարը ջուրն է, ակնյայտ իրողութիւն է: Նա երեւում է իր բոլոր վիճակներով՝ համատարած ծովից մինչեւ ցոյ ու շաղ, վերահաստատելով բնութեան գոյութեան ու շարժման տիեզերական օրէնքները: Բնութեան մէջ ամենասովորական, ամեն օր դիտելի այլակերպութիւնը ջրի կերպարանափոխութիւնն է, որի փառայեղ պատկերը տեսնում ենք տաղում:

Ծաղկունքդ ամէն շաղ առին,

Շաղն յամպէն, ամպն յարեգակնէն:

Սա ոչ միայն բնութեան անընդհատ շրջապտոյտն է, այլեւ պատճառի ու հետեւանքի համատիեզերական օրէնքը՝ գեղարուեստական արտայայտութեամբ: Ամէն ինչ շրջապտոյտի մէջ է: Ոչինչ չի կորչում, այլ մի վիճակից անցնում է այլ վիճակի: Պայծառակերպութիւնն էլ հոգեւոր դաշտում հէնց այդ կերպարանափոխութիւնն է: Սա վերածնունդի գաղափարն է, վերածնունդ՝ մարմնական եւ հոգեւոր իմաստներով: Եւ վարդավառ ծաղիկն այդ խորհուրդներն է կրում. արմատը տիղմի մէջ, նա ձգուում է դէպի արեւը եւ բացուում՝ թերթերին տիղմի ոչ մի հետք:

Եւ ջուրը՝ որպէս տօնի անբաժանելի յատկանիշ, իր բոլոր խորհուրդներով հանդերձ առաւել մեծ արժէք է ստանում, երբ նրա վրայ շողում է հոգեւոր ձգտման խորհրդանշանը:

Թերեւս նոր փաստեր ու ստուգաբանական նոր մօտեցումներ կը յայտնուեն՝ հիմնաւորելու կամ մեկընդմիջտ հերքելու «վարդ»-«ջուր» ստուգաբանութիւնը: Իսկ մինչ այդ, «վարդավառը» թող շողայ նաեւ որպէս ժամանակների հոլովոյթում մթագնած ծաղկանուն, անունն այն ծաղկի, որին մեր նախնիները տօն են նուիրել:

Резюме

⁴¹ Հայկական նունուֆարը հէնց դեղին է: Հաւանաբար այն վայրերում, որոնք հեռու են լճերից ու գետերից, եւ որտեղ չի աճում նունուֆարը, մարդիկ գտել են մի ծաղիկ, որ նման է նրան եւ փնջած կարող էր մարմնաւորել ծիսական ծաղիկը:

Армянское слово «вардавар» до сих пор не имеет непрекесаемой этимологии, поэтому любая кажущаяся вероятной этимологическая попытка, основанная на определенных аргументах, имеет право на существование в качестве еще одной гипотезы.

Предложенная мной этимология и новое восприятие слова (слов) являются результатом синтеза и анализа лингвистических, мифологических, литературных, культурных и других данных. Для новой этимологии я полагаюсь на некоторых ключевых установок:

- Вардавар празднуют примерно через три месяца после цветения роз.
- Этимологию слова «нунуфар» я вывожу из египетского космогонического мифа, из праотца всех богов, из вод предвечного океана Нуна (**нун** (водная субстанция) + у + **фар** (носить, пламя, блеск, лампада)).
- Наличие «водного» компонента в названиях цветка нунуфара-лотоса на разных языках, как например лат. aqua lilium, англ. waterlily, русс. водяная лилия и т. д..
- Предположение, что используемое слово «вард» в «Песнь Вардавара» это не имя цветка розы, а именно хетское слово «вода». И это предположение исходит из анализа внутренних смысловых полей и жанровой логики загадки, которую, по моему, применяет Нарекаци в песни. Возможно, в дальнейшем пересмотрев армянскую средневековую литературу с этой точки зрения, найдутся и другие примеры инопонимания слова «вард»: и вдруг окажется, что слово «вард» в смысле и значении «вода» тоже существовало в армянском языке.
- В результате образного анализа стихотворения Нарекаци, умозаключение о том, что ключевым персонажем песни Вардавара является нунуфар (это заключение и было отправной точкой моей этимологии).

Заключение. Слово «вардавар» построено теми же формами словотворения, что и имя лотоса-нунуфара на всех древних и новых языках, имев в состав «воду» как компонент (**вард** (вода) + а + **вар** (носить, пламя, солнце, яркий)), и является синонимом **нунуфара**. И я думаю, что праздник, который первоначально отмечался в 1 Навасарда (11 августа), а с 551-го года - как переходящий - с 28 июня по 1 августа, был посвящен цветку, который расцветает именно в этот период, вардавара (водяная лилия), священному образу Востока, символу творящей силы, космической сущности, возрождения, чистоты, духовного роста.

Summary

The Armenian word “Vardavar (the ancient Armenian festival in honor of the goddess Astghik, according to folk tradition, is poured water on each other, in the Christianity Transfiguration Day) still has no indisputable etymology, therefore, any etymological attempt that seems possible and bases on certain arguments, is entitled to existence as another hypothesis. Some linguists assume that the root "vard" comes from the Hittite word "vard" or from the Sanskrit root "vard", the meaning of which is "water." Others believe that the “vard” is the name of a flower - a rose borrowed from Pahlavi, which is widely spread in Armenian.

The etymology proposed by me and the new perception of word(s) are the result of the synthesis and analysis of linguistic, mythological, literary, cultural and other data. For a new etymology, I rely on some key foundations:

- First is the substantiation that flower, grapes, apples, etc. festivals are usually celebrated during their flowering or ripening, and Vardavar is celebrated about three months after the roses bloom.
- Second is the etymology of the word “nunufar”, which I derive from the Egyptian cosmogonic myth, from the forefather of all the gods, from the waters of the eternal ocean Nun (Nun (water substance) + y + φap (to worn, flame, glitter, lamp)).
- Third is, the presence of a “water” component in the names of a nunufar-lotus flower in different languages, as a rull: Latin. aqua lilium waterlily, rus. water lily, etc ..
- Fourth is the suggestion that the word "vard" used in "Song of Vardavar" is not the name of a rose flower, but the Sanskrit word “water”. And this assumption comes from the analysis of the internal semantic fields and the genre logic of the riddle, which, in my opinion, used Narekatsy in this song. Perhaps, after further revising the Armenian medieval literature from this point of view, there will be other examples of the misunderstanding of the word "vard": and suddenly it turns out that the word "vard" in the meaning of "water" also existed in the Armenian language.
- Fifth is as a result of the figurative analysis of the Narekatsi poem, the deduction that the key character of the Vardavar song is nunufar (this conclusion was the starting point of my etymology).

Conclusion: The word “Vardavar” is built with the same forms of word-making as the synonym name of lotus in all ancient and new languages, having “water” as a component (vard (water) + a + var (to wear, flame, lamp, bright)), and is synonymous with nunufar. And I think that the holiday, which was originally celebrated on 1 Navasard (August 11), and from the year 551, as a movable festival, from June 28 to

August 1, was dedicated to a flower that blossoms during this period, vardavaru (water lily), the sacred image of the East, the symbol of creative power, cosmic essence, rebirth, purity, spiritual growth.

